**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**N 7/11**

**Քաղ.Երեւան** **25 փետրվար 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան, Ա. Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. փետրվարի 25-ի նիստում (արձանագրություն N 2/2) քննարկեց «Ավանգարդ Գազ» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Նազարյանի կողմից 2010թ. դեկտեմբերի 29-ին ներկայացված «LPG CHG AUTOGAZ SYSTEM HAG» (հայտի համարը՝ 20100398) ապրանքային նշանի գրանցումը մերժելու վերաբերյալ կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք է հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը, համաձայն որի որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքայի նշանին զուգորդվելը: Ուստի, հայտարկվող «LPG CHG AUTOGAZ SYSTEM HAG» ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 12-րդ և 35-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված համակցված («Մուլտի գրուպ» Կոնցեռն ՍՊԸ, Երևան, Թումանյան 21, h 7464) և 35-րդ դասի ապրանքների համար միջազգային գրանցում ունեցող համակցված «HSG» (Kraft Foods Deutschland, Intellectual Property GmbH &Co. KG, Langemarkst, 4-20, 28199 Bremen (DE), IR 446369) ապրանքային նշաններին:

Բողոքում ներկայացված է մերժման հիմքը եւ նշված է, որ 2010թ. մայիսի 12-ին Մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանների եւ արդյունաբերական նմուշների բաժնի կողմից մերժվել է ապրանքային նշանի գրանցումը:

Բողոքարկողը նշում է, որ մերժման մասին որոշումն սատանալուց հետո նույն թվականի սեպտեմբերի 27-ին Օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն ներկայացվել է կրկնական

փորձաքննություն խնդրարկելու մասին դիմում, սակայն նոյեմբերի 18-ին կրկնական փարձաքննության արդյունքում հայտարկվող նշանը նույնպես մերժվել է:

Բողոքարկողը ապրանքային նշանի գրանցումը մերժելու և կրկնական ւիորձաքնության որոշման հետ համաձայնվել չի կարող, քանի որ հայտարկվող «LPG/CHG AUTOGAZ SYSTEM HAG» ապրանքային նշանը նույնական կամ նման չէ ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ չի պարունակում, ավելին ընդհանրապես չի զուգորդվում (շփոթելու աստիճան նմանությունը) ավելի վաղ ապրանքային նշաններին:

«Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգի» (այսուհետ Կարգ) 110-րդ կետի համաձայն ապրանքային նշանը համարվում է այլ նշանին նույնական, եթե դրանք համընկնում են իրենց բոլոր տարրերով, դրանց փոխդասավորվածությամբ, գույներով և մնացած բոլոր առանձնահատկություններով: Համեմատվող նշանները չեն համընկնում իրենց բոլոր տարրերով և փոխդասավորվածությամբ, գույներով առավել ևս, քանի որ հայտարկվող ապրանքային նշանը գունավոր է, իսկ մերժման հիմքերը երկուսն էլ սև և սպիտակ: Ինչ վերաբերում է մնացած բոլոր առանձնահատկություններին, ապա դրանք ըստ էության բացակայում են: Հայտարկվող ապրանքային նշանն ըստ էության առանձնանում է իր ամբողջականության մեջ, այն երբեք չի կարող հիմք հանդիսանալ մերժման հիմքերի հետ նույնական կամ շփոթելու աստիճան նմանության համար:

Հայտարկվող ապրանքային նշանը համակցված է, շրջանաձև, որի ընդհանուր ֆոնը սև է, եզրագծված դեղին լայն շերտով: Դեղին նիստի վրա լատինական այբուբենի մեծատառերով կատարված է «LPG/CHG AUTOGAZ SYSTEM (էլփիջի սիէյջջի օթոգազ սիսթեմզ, թարգմանաբար էլփիջի սիէյջջի ավտոմեքենաների գազի համակարգ): Նշանի հիմնական կենտրոնական մասում պատկերված է դեպի ձախ նայող առյուծի գլուխ, որի առջևում վառվող կրակի պատկեր է: Դրանից ներքև լատինական այբուբենի մեծատառերով կատարված է «HAG» (հագ) մտացածին բառը: Այն վերցված է հայտատուի անվանման սկզբնատառերից (Հակոբ Ավանգարդ գազ): Բողոքարկողը նշում է, որ HAG բառի առաջին վերջին մասնիկները կատարված են այնպես, որ ձեռք են բերել շրջանի թեքությունը, առաջին տառն էլ զուգորդվում է վերնամասում կատարված կրակի պատկերի հետ, իսկ կենտրոնական տառը ավելի ակնհայտ և ցայտուն դիրք է զբաղեցնում:

Բողոքարկողը նշում է, որ Կարգի 111-րդ կետի համաձայն ապրանքային նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճան նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն մարդու (միջին սպառողի) մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության իմաստի ընկալման զգացողություն), չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Բողոքում նշված է, որ հայտարկված ապրանքային նշանը միջին սպառողի հետ ոչ մի

առնչություն չունի, այն լայն սպառման օբյեկտ չէ, այլ ընհակառակը նեղ սպառման առարկա է: Նշված է նաև, որ համեմատվող նշանները երբեք սպառողի մոտ չեն կարող առաջացնել նույն պատկերի, բառի կամ դրանց համակցության զգացողությունը, քանի որ դրանց տարբերություններն ակնհայտ են:

Հետևաբար սպառողի մոտ երբեք զուգորդում չի առաջանա նույնիսկ եթե սպառողը նկատի համընկնող տարրեր կամ մաս, ապա սպառողի մոտ չի առաջանա պատկերացում մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որին ինքն արդեն առնչվել է: Բողոքարկողը նշում է, որ պետք է հաշվի առնել, որ ապրանքային նշանների առանձին տարբերությունների առկայությունը, որոնք էական դեր են կատարում նշանի ընկալման համար: Նույնիսկ անմիջական համեմատության բացակայության դեպքում հայտարկվող ապրանքային նշանը իր առանձնահատկություններով ցայտուն են և սպառողի համար ընկալելի են ապրանքի ընտրության ժամանակ:

Բողոքարկողը, անդրադառնալով հայտարկվող ապրանքային նշանին, ապրանքների և ծառայությունների համար, որտեղ միջին սպառող հասկացությունը չի գործում, նշում է, որ ապրանքային նշանի վրա զետեղված «LPG/CHG AUTOGAZ SYSTEMS» արտահայտությունը նշանակում է liquid petroleum/casing head gas autogas systems, որն էլ թարգմանաբար նշանակում է հեղուկ նավթագազային (сжиженный нефтеной газ) կամ զուգընթաց համընթաց գազի համակարգ (газ на выходе из обсадной колонны, попутный газ): Հայտատուի գործունեությունը սամանափակվում է ավտոմեքենաների գազի համակարգերի տեղակայման, ներմուծման և վաճառքի հարցերով, ուստի ունի նեղ սպառման ոլորտ և համընդհանուր վաճառքի առարկա չի հանդիսանում: Այն սպառվում է միայն հատուկ մասնագետների խորհրդատվության արդյունքում, և ավելին տեղակայումն էլ սպառողը չի կատարում այլ կատարում են հայտատուի կողմից նախապատրաստում անցած հատուկ մասնագետների կողմից: Բողոքարկողը նշել է, որ հայտարկվող ապրանքային նշանն ապրանքներում չի կատարելու առաջնային կամ էական դեր, այլ ունենալու է երկրորդական դեր:

Ամփոփելով իր բողոքը՝ բողոքարկողը խնդրում է Օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, վերանայել ապրանքային նշանների բաժնի փորձաքննությունների որոշումը և գրանցել հայտարկվող «LPG/CHG AUTOGAZ SYSTEM HAG» համակցված ապրանքային նշանն առնվազն «դաս 12. հեղուկ նավթագազային (сжиженный нефтеной газ) կամ զուգընթաց համընթաց գազի (газ на выходе из обсадной колонны, попутный газ) ավտոմեքենաների գազի համակարգեր, գազի բալոններ, գազի տեղադրման համար նախատեսված պարագաններ, սարքեր, ակսեսուարներ» և «դաս 35. հեղուկ նավթագազային (сжиженный нефтеной газ) կամ զուգընթաց համընթաց գազի (газ на выходе из обсадной колонны, попутный газ) ավտոմեքենաների գազի համակարգերի, գազի բալոնների, գազի տեղադրման համար նախատեսված պարագանների, սարքերի, ակսեսուարների մանրամեծածախ առևտուր, ներմուծում և արտահանում» ապրանքների և ծառայությունների համար:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Նազարյանի կողմից 2010թ. դեկտեմբերի 29-ին ներկայացվել է «LPG CHG AUTOGAZ SYSTEM HAG» (հայտի համարը՝ 20100398) ապրանքային նշանի գրանցումը մերժելու վերաբերյալ կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը: Նշվեց, որ հայտարկվող «LPG CHG AUTOGAZ SYSTEM HAG» ապրանքային նշանը չի գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 12-րդ և 35-րդ դասերի ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված համակցված («Մուլտի գրուպ» Կոնցեռն ՍՊԸ, Երևան, Թումանյան 21, h 7464) և 35-րդ դասի ապրանքների համար միջազգային գրանցում ունեցող համակցված «HSG» (Kraft Foods Deutschland, Intellectual Property GmbH &Co. KG, Langemarkst, 4-20, 28199 Bremen (DE), IR 446369) ապրանքային նշաններին: Նշվեց, որ բողոքում տարված են համեմատություններ 35-րդ դասի համար «LPG CHG AUTOGAZ SYSTEM HAG» (հայտի համարը՝ 20100398) հայտարկվող և Kraft Foods Deutschland, Intellectual Property GmbH &Co. KG, Langemarkst, 4-20, 28199 Bremen (DE), IR 446369 գրանցված ապրանքային նշանների միջև:

Մանրամասն ուսումնասիրելով բողոքում բերված հիմքերը՝ Կոլեգիայի անդամները եկել են այն եզրահանգման, որ (Kraft Foods Deutschland, Intellectual Property GmbH &Co. KG, Langemarkst, 4-20, 28199 Bremen (DE), IR 446369) ապրանքային նշանի գրանցումը հիմք չի կարող հանդիսանալ հայտարկված ապրանքային նշանի մերժման համար:

Նշվեց նաև, որ 12-րդ և 35-րդ դասերի համար գրանցված «Մուլտի գրուպ» Կոնցեռն ՍՊԸ-ի ապրանքային նշանը և հայտարկվող ապրանքային նշանը նման են պատկերային մասով և խնդիրներ կարող են լինել, քանի որ երկուսն էլ զբաղվում են գազի լցման հետ կապված ծառայություններով: Կոլեգիայի կողմից հայտնվեց կարծիք բողոքը մերժելու վերաբերյալ:

Բողոքը մերժելու հետ կապված կոլեգիայի նախնական կարծիքի հետ փորձաքննության բաժինը համաձայնվեց:

Բողոքարկողը իր ելույթում նշեց, որ հայտատուն ոչ մի նպատակ չի հետապնդել նմանակել որևիցե մեկի ապանքային նշանին, ապրանքային նշանի վրա ընտրվել է դասական առյուծի պատկեր, իսկ ինչ վերաբերում է «HAG» հապավմանը, ապա դա մտացածին է, այն վերցված է հայտատուի անվանման սկզբնատառերից (Հակոբ Ավանգարդ գազ): Հայտատուն գրանցելով ապրանքային նշանը՝ նպատակ է հետապնդում Իտալայից, Իսպանիայից, Անգլիայից և Թուրքիայից իր կողմից ներմուծվող գազի բալոնները տարբերել, այլ ներմուծողների նույն բալոններից: Նշեց նաև, որ դրանք որևիցե կերպ չեն առնչվում «Մուլտի գրուպ» Կոնցեռն ՍՊԸ-ի կողմից գրանցած ապրանքային նշանի գործունեության հետ: Նշվեց նաև, որ

«Մուլտի գրուպ» Կոնցեռն ՍՊԸ-ի կողմից գրանցված ապրանքային նշանը օգտագործվում է ավտոմեքենաների գազի տարրաների լիցքավորման համար, իսկ «LPG CHG AUTOGAZ SYSTEM HAG» ապրանքային նշանը օգտագործվելու է ներմուծվող գազի բալոնների համակարգի առանձնահատկությունը սպառման շուկայում ընդգծելու նպատակով:

Կոլեգիայի անդամը առարկեց բողոքարկողի այն հայտարարության դեմ, որ ապրանքային նշանները որևիցե կերպ չեն առնչվում միմյանց հետ, տեղադրված համակարգը կարող է լիցքավորվել «Մուլտի գրուպ» Կոնցեռն ՍՊԸ-ի լցակայանում: Սակայն դա չի կարող խոչընդոտ հանդիսանալ հայտարկված ապրանքային նշանի գրանցման համար:

Կոլեգիայի անդամի կողմից նշվեց, որ բողոքում ներկայացված է ապրանքների և ծառայությունների նեղացված ցանկը և բողոքարկողը խնդրում է հիշյալ հայտարկված ապրանքային նշանը գրանցել այդ ապրանքների և ծառայությունների համար:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Բավարարել «Ավանգարդ Գազ» ընկերության բողոքը և գրանցել «LPG CHG AUTOGAZ SYSTEM HAG» (հայտի համարը՝ 20100398) համակցված ապրանքային նշանը ստորև նշված 35-րդ և 12-րդ դասի ապրանքների և ծառայությունների համար՝

դաս 12. հեղուկ նավթագազով կամ զուգընթաց գազով աշխատող ավտոմեքենաների գազի բալոններ, գազի բալոնների տեղադրման եւ ավտոմեքենաների գազասնուցման համակարգի համար նախատեսված պարագաներ, սարքեր, աքսեսուարներ.

դաս 35. հեղուկ նավթագազով կամ զուգընթաց գազով աշխատող ավտոմեքենաների գազի բալոնների, գազի բալոնների տեղադրման եւ ավտոմեքենաների գազասնուցման համակարգի համար նախատեսված պարագաների, սարքերի, աքսեսուարների մանրամեծածախ առևտուր, ներմուծում և արտահանում:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա. Ազիզյան